

Luys Lnyu®




ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆ

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային,
2018-2019թթ., %**




Տնտեսական ակտիվության ցուցանիշի տարեսկզբի աճման միտումը 2019թ. մարտին չի շարունակվել: Հունվար-մարտ ամիսներին ՏԱՑ-ը կազմել է 6.5 տոկոս, որը 3.9 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Մարտ ամսվա ՏԱՑ-ի աճը նախորդ տարվա մարտի նկատմամբ կազմել է 6.2 տոկոս, ինչը 1.4 տոկոսային կետով ավելի ցածր է, քան փետրվար ամսվա ՏԱՑ-ի աճը 2018թ. փետրվարի նկատմամբ:

Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը (8.0 տոկոսային կետով): Աճին նպաստել են նաև առևտրի (1.2 տոկոսային կետ) և շինարարության (0.8 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը:


Գյուղատնտեսության ցուցանիշն այսուհետ հրապարակվելու է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված՝ ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ: Հունվար-մարտ ամիսների տվյալներով գյուղատնտեսության ոլորտի թողարկումը նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 0.2 տոկոսով:

Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-մարտ, %



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ


Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



2019 թվականի հունվար-մարտ ամիսներին արդյունաբերության թողարկման ինդեքսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 2.0 տոկոսով: 2018թ. նույն ցուցանիշը կազմել էր 8.3 տոկոս:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




Շինարարության ծավալի աճի տեմպը 2019թ. սկզբին բավական բարձր էր, սակայն դրսևորում է նվազման միտում: Առաջին երեք ամիսներին շինարարության աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 10.8 տոկոս, ինչը 12.2 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսության կառուցվածքում նախորդ տարվա ամենաարագ աճող ճյուղը՝ ծառայությունները, 2019թ. երրորդ ամսին 2018թ. մարտի նկատմամբ աճել է 17.3 տոկոսով, որը 0.9 տոկոսային կետով ավելի բարձր է, քան նախորդ տարվա ցուցանիշը (16.4):

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




Աղյուսակ 1. Ծառայությունների կառուցվածքը և նպաստումները, 2019թ. հունվար-փետրվար¹

	2018, մլն. դրամ	2019, մլն. դրամ	Կշիռը, 2018թ., %	Աճ, %	Նպաստում, տոկոսային կետ
Ընդամենը	225,686.2	268,441.0	100.0	117.5	17.5
Կացության և հանրային սննդի կազմակերպում	12,959.0	16,462.1	5.7	125.2	1.4
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	46,987.8	67,812.7	20.8	141.6	8.7
Կրթություն	8,458.5	9,263.9	3.7	108.1	0.3
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	9,951.9	11,881.8	4.4	113.9	0.6
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	8,739.2	9,006.7	3.9	101.1	0.0
Տեղեկատվություն և կապ	36,573.5	38,487.0	16.2	105.2	0.8
Տրանսպորտ	28,633.6	29,176.3	12.7	100.9	0.1
Վարչարարական և օժանդակ գործունեություն	9,324.2	10,042.9	4.1	110.1	0.4
Մասնագիտ., գիտական և տեխ. գործունեություն	8,444.4	8,758.2	3.7	103.4	0.1
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	51,703.7	63,569.9	22.9	121.4	4.9
Սպասարկման այլ ծառայություններ	3,910.4	3,979.5	1.7	101.1	0.0

Ծառայությունների կառուցվածքում ամենամեծ նպաստում ունեցողը շարունակում է մնալ մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտը, որը հունվար-փետրվար ամիսների տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 8.7 տոկոսային կետով: Աճին նպաստել են նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության (4.9 տոկոսային կետով), կացության և հանրային սննդի կազմակերպման (1.4 տոկոսային կետով) ոլորտներում մատուցված ծառայությունների աճերը (տե՛ս Աղյուսակ 1):

ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




Առևտրի շրջանառության աճի տեմպն ընթացիկ տարվա հունվար ամսին եղել է ավելի բարձր, քան նախորդ տարի, սակայն հունվար-փետրվար և հունվար-մարտ

¹ 2019թ. հունվար-մարտ ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

ամիսների կուտակային աճի տեմպերը դանդաղել են՝ կազմելով համապատասխանաբար 13.1 և 10.1 տոկոս: Վերջինս 3.3 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, 2018-2019թթ., %²



Արտահանման անկումը շարունակվել է նաև 2019 թվականի երրորդ ամսին, սակայն ավելի դանդաղ տեմպերով: Այսպես՝ հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանման ծավալը նվազել է 8.6 տոկոսով:


Արտահանման ծավալների նվազմանն ամենամեծ նպաստումն է ունեցել հանքահումքային արտադրանքի արտահանման 18 տոկոսով կրճատումը, որը ընդհանուր արտահանման անկմանը նպաստել է 5.4 տոկոսային կետով: Նվազել են նաև «ոչ թանկարժեք մետաղներ», «թանկարժեք մետաղներ» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները, որոնք ընդհանուր արտահանմանը նպաստել են համապատասխանաբար -5.4, -1.0 և -0.9 տոկոսային կետով: Արտահանման աճ է գրանցվել «պատրաստի սնունդ», «տարբեր արդյունաբերական ապրանքներ» և «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերում, որոնց դրական նպաստումն ընդհանուր արտահանմանը կազմել է համապատասխանաբար 1.4, 0.5 և 0.4 տոկոսային կետ³:

* Ներկայացված են 2019 թվականի հունվար-մարտ ամիսների արտաքին առևտրի վերանայված տվյալները:

³ Արտահանման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար-փետրվար ամիսների տվյալների հիման վրա, քանի որ հունվար-մարտ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, 2018-2019թթ., %



Ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը, նախորդ տարվա բավական բարձր ցուցանիշից հետո, ընթացիկ տարվա սկզբից նվազում են: Հունվար-մարտ ամիսներին ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 3.1 տոկոսով: Ներմուծման ծավալների անկումը հիմնականում պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ», «պատրաստի սնունդ», «սարքավորումներ», «քիմիական արտադրանք» ապրանքախմբերը, որոնց բացասական նպաստումները ընդհանուր ներմուծման կրճատմանը կազմել են համապատասխանաբար -3.1, -1.9, -1.4 և -0.5 տոկոսային կետ:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2018-2019թթ., %⁴




2019թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.3 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 4.4 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.0 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 4.2, 1.1 և 5.0 տոկոս:

ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները 2018-2019թթ., կուտակային աճը, %
(աճը նշանակում է << դրամի արժևորում)**



⁴ Աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների վերանայված տվյալներով:



2019 թվականի հունվար-մարտին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.2 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 7.0 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 14.4 տոկոսով:


ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

Բյուջեի եկամուտներ

2019 թվականի հունվար-մարտ ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 25.0 տոկոսով, ընդ որում՝ հարկերը և տուրքերն աճել են 24.9 տոկոսով: Միասնական հաշվի մնացորդը կազմել է 41.1 մլրդ դրամ, որը 32.0 տոկոսով ավելի է, քան նախորդ տարվա փետրվարի վերջի դրությամբ:

Բյուջեի ծախսեր



Գծապատկեր 11. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրա բաղադրիչների նպաստումները, %



ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվար-մարտ ամիսներին կազմել են 287.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 2.1%-ով, որը առավելապես (4.6 տոկոսային կետով) պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում նվազել են 60.1 տոկոսով (նպաստումը՝ -2.6 տոկոսային կետ):

Պետական բյուջեի պակասուրդ


Գծապատկեր 12. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կշիռները, %, հունվար-մարտ



2019թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 31.9 մլրդ դրամ, որի ֆինանսավորման համար ներգրավվել է 1.2 մլրդ դրամ (պակասուրդի 3.9 տոկոսը)՝ ներքին աղբյուրներից և 30.7 մլրդ դրամ (պակասուրդի 96.1 տոկոսը)՝ արտաքին աղբյուրների հաշվին:

Պետական պարտք


Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



2019թ. մարտի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 6,934.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 1.8 տոկոսով: Պարտքի 92.2 տոկոսը՝ 6,389.5 մլն ԱՄՆ դոլարը, հանդիսացել է կառավարության պարտքը: Վերջինս 2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ աճել է 0.3 տոկոսով:

Գնաճը


Գծապատկեր 14. 12-ամսյա գնաճ, %



2019 թվականի մարտին նախորդ տարվա մարտի նկատմամբ սպառողական գներն աճել են 1.9 տոկոսով՝ նախորդ տարվա 3.7 տոկոսի համեմատ: Սակայն այն դեռևս հեռու է Կենտրոնական բանկի թիրախից:


Փողի զանգված և բազա

Գծապատկեր 15. Փողի բազայի 12-ամսյա աճը, %



2019թ. մարտին փողի բազայի աճի տեմպը եղել է ավելի բարձր, քան նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը: Այսպես՝ 2019թ. մարտ ամսվա վերջի դրությամբ փողի բազան աճել է 21.2 տոկոսով՝ նախորդ տարվա 1.7 տոկոս աճի դիմաց:


Գծապատկեր 16. Փողի զանգվածի 12-ամսյա աճը, %



Փողի զանգվածի աճի տեմպը 2019թ. մարտին եղել է ավելի ցածր, քան նախորդ տարի: Փողի զանգվածի աճի տեմպը ունեցել է դանդաղման միտում նախորդ տարի, որը կարծես թե շարունակվում է ընթացիկ տարում: 2019թ. մարտին փողի զանգվածը նախորդ տարվա մարտի նկատմամբ աճել է 7.2 տոկոսով:


Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը 2018-2019թթ., %




2019թ. մարտին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. մարտի նկատմամբ կազմել է 12.7 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ավանդների աճի տեմպին (2018թ. մարտի աճը՝ 9.5%):

Գծապատկեր 18. Ավանդների 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2019թ., %



Ավանդների աճին հիմնականում նպաստել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ 8.3 տոկոսային կետով և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 4.0 տոկոսային կետով:


Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճին տնտեսության ճյուղերի նպաստումները, %, 2019թ. հունվար-մարտ



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 14.6 տոկոսով, որին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.7 տոկոսային կետով, ինչպես նաև հիպոթեքային վարկերը և արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերը՝ յուրաքանչյուրը 2.1 տոկոսային կետով:


Վճարային հաշվեկշիռը

Գծապատկեր 20. ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդը և կառուցվածքը, 2013-2018թթ., % ՀՆԱ-ում



2018թ. ընթացիկ հաշվի մնացորդը կտրուկ վատթարացել է՝ նախորդ տարվա -2.4 տոկոսից դառնալով -9.1 տոկոս: Ընթացիկ հաշվի նման վատթարացումը հիմնականում կապված է առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի աճով, որը ՀՆԱ-ի նկատմամբ վատթարացել է 3.2 տոկոսային կետով: Սակայն ընթացիկ հաշվի մյուս երկու բաղադրիչները նույնպես բացասական միտում են ցուցաբերել: Այսպես՝ առաջնային եկամուտների զուտ հոսքերը ՀՆԱ-ի նկատմամբ կրճատվել են 2.7 տոկոսային կետով, իսկ երկրորդային եկամուտները՝ 0.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 21. ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի մնացորդը և կառուցվածքը, 2013-2018թթ., % ՀՆԱ-ում



Գծապատկեր 21-ում ներկայացված է վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը՝ ըստ BOP 6 մեթոդաբանության, որի համաձայն՝ ցուցանիշները ներկայացվում են զուտ

տեսքով՝ կապիտալի արտահոսքից հանվում է կապիտալի ներհոսքը: Այսինքն, եթե ցուցանիշը բացասական է, ապա դա նշանակում է, որ առկա է զուտ ներհոսք, իսկ եթե դրական է՝ զուտ արտահոսք:

Վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի մնացորդը կազմել է ՀՆԱ-ի 5.5 տոկոսը: Ֆինանսական հաշիվը ցույց է տալիս ընթացիկ հաշվի մնացորդի ֆինանսավորման աղբյուրները: Այսպես՝ ընթացիկ հաշվի 9.1 տոկոս բացասական մնացորդի 2.1 տոկոսային կետը ֆինանսավորվել է ուղղակի ներդրումների հաշվին, 3.3 տոկոսային կետը՝ այլ ներդրումների (հիմնականում պարտքային գործիքներ) հաշվին, իսկ 0.4 տոկոսային կետը՝ արտաքին պահուստների հաշվին:

ՕՈՒՆ-երը փոքր-ինչ աճել են նախորդ տարվա համեմատ՝ ՀՆԱ-ում 2.0 տոկոսից դառնալով 2.1 տոկոս (227.5 մլն ԱՄՆ դոլարից դարձել են 266.0 մլն ԱՄՆ դոլար):

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության ցուցանիշի տարեսկզբի աճման միտումը 2019թ. մարտին չի շարունակվել: Հունվար-մարտ ամիսներին ՏԱՅ-ը կազմել է 6.5 տոկոս, որը 3.9 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Մարտ ամսվա ՏԱՅ-ի աճը նախորդ տարվա մարտի նկատմամբ կազմել է 6.2 տոկոս, ինչը 1.4 տոկոսային կետով ավելի ցածր է, քան փետրվար ամսվա ՏԱՅ-ի աճը 2018թ. փետրվարի նկատմամբ: Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը (8.0 տոկոսային կետով): Աճին նպաստել են նաև առևտրի (1.2 տոկոսային կետ) և շինարարության (0.8 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը: Հունվար-մարտ ամիսների տվյալներով գյուղատնտեսության ոլորտի թողարկումը նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 0.2 տոկոսով:

2. Շինարարության ծավալի աճի տեմպը 2019թ. սկզբին բավական բարձր էր, սակայն դրսևորում է նվազման միտում: Առաջին երեք ամիսներին շինարարության աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 10.8 տոկոս, ինչը 12.2 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

3. Առևտրի շրջանառության աճի տեմպն ընթացիկ տարվա հունվար ամսին եղել է ավելի բարձր, քան նախորդ տարի, սակայն հունվար-փետրվար և հունվար-մարտ ամիսների կուտակային աճի տեմպերը դանդաղել են՝ կազմելով համապատասխանաբար 13.1 և 10.1 տոկոս: Վերջինս 3.3 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: 4. ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվար-մարտ ամիսներին կազմել են 287.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 2.1%-ով, որը

առավելապես (4.6 տոկոսային կետով) պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում նվազել են 60.1 տոկոսով (նպաստումը՝ -2.6 տոկոսային կետ):

5. 2018թ. ընթացիկ հաշվի մնացորդը կտրուկ վատթարացել է՝ նախորդ տարվա - 2.4 տոկոսից դառնալով -9.1 տոկոս: Ընթացիկ հաշվի նման վատթարացումը հիմնականում կապված է առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի աճով, որը ՀՆԱ-ի նկատմամբ վատթարացել է 3.2 տոկոսային կետով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: